«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2015 թվականի

Գիտական խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Լսելով և քննարկելով **«Գիտական խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Գիտական խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կանոնակարգի 1-ին բաժնի՝

ա. 1.2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«**Գիտաուսումնական լաբորատորիա՝** ակադեմիական տարատեսակ հետազոտություններով զբաղվող պրոֆեսորադասախոսական կազմից, գիտաշխատողներից, ասպիրանտներից, ուսանողներից կազմված կոլեկտիվ, որոնց ստեղծման հիմքը՝ կոլեկտիվ նախագծերի իրականացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է: Գիտաուսումնական լաբորատորիաները կառուցվում են հորիզոնական համագործակցության սկզբունքներով և դառնում են ակադեմիական միջավայրի աճի հիմքը»,

բ. 1.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.5-րդ կետով.

«1.5. **Գիտաուսումնական լաբորատորիաների հետազոտությունների իրականացման ուղղությունները.**

Գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծման հիմնական նպատակներն են.

- երիտասարդ գիտնականների ակտիվ ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում,

- տեսամեթոդաբանական և կիրառական բնույթի գիտահետազոտական նախագծերի իրագործումը,
- ուսումնական գործընթացին գիտահետազոտական աշխատանքների արդյունքների միասնացման ակտիվացումը:

Գիտաուսումնական լաբորատորիաները ստեղծվում են համալսարանի գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորի զեկուցագրի հիման վրա և հաստատվում համալսարանի ռեկտորի կողմից:

Գիտաուսումնական խմբի հաջողված աշխատանքի դեպքում այն կարող է վերափոխվել գիտաուսումնական համապատասխան լաբորատորիայի».

2) կանոնակարգի 1-ին բաժնի 1.2-րդ, 1.3-րդ կետերում, 2-րդ բաժնի 2.1-ին, 2.2-րդ կետերում, 3-րդ բաժնի 3.2-րդ կետում, 4-րդ բաժնի 4.3 կետում և 8-րդ բաժնի 8.4-րդ կետում «մագիստրանտներ» բառը փոխարինել «ուսանողներ» բառով.

3) կանոնակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ բաժիններում «գիտաուսումնական խումբ» բառերից հետո լրացնել «(լաբորատորիա)» բառով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

30.09.2015 թ.